ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Խոր ցավով տեղեկացանք մեր ժողովրդի արժանավոր զավակ, մեծանուն գրող Հրանտ Մաթևոսյանի անժամանակ մահվան մասին:

Հանուն Ամենայն Հայոց Կաթողիկոսության, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության և Գերագույն Հոգևոր Խորհրդի, ծանր կորստի այս պահին վշտացյալ Մեր հոգու անկեղծ ցավակցություններն ենք բերում Մաթևոսյան սգակիր ընտանիքին, ննջեցյալի բոլոր հարազատներին և մեր ժողովրդի բարեպաշտ զավակներին:

Վաստակյալ մտավորական և հայրենասեր հայորդի Հրանտ Մաթևոսյանը գրական իր վաստակով հավելեց փառքը մեր ժողովրդի՝ անթառամ հիշատակ թողնելով հայորդյաց հոգիներում:

Աղոթում ենք, որ Ամենողորմ Տերն Իր բարեգթությամբ երկնային լուսեղեն հարկերում հանգստություն պարգևի ննջեցյալի հոգուն և մխիթարության ու սփոփանքի բյուր շնորհներ՝ ննջեցյալի այրուն, զավակներին ու մերձավորներին:

«Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի. ամէն»:

Վշտակից և աղոթարար՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
19 դեկտեմբերի 2002 թ.